Ուսուցիչների պարտադիր վերապատրաստում

Աշխարհագրություն

Հետազոտական ավարտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես եմ ուսուցանում.«Աշխատանքի աշխարհագրական բաժանում»

Կատարող՝ Երևանի Հակոբ Կարապենցի անվան թիվ 6 հիմնական դպրոցի ուսուցչուհի Սիրանուշ Ազատյան

Դասախոս՝ Աշոտ Խաչատրյան

Երևան- 2022

Լեոյի անվան թիվ 65 դպրոց

Ներածություն

Աշխարհագրությունը երկրի մասին գիտությունների համակարգ է, որն ուսումնասիրում է բնական և արտադրական տարածքային համալիրների ձևավորման և զարգացման օրինաչափությունները։

Իրոք, շատ է բազմազան երկրի աշխարհագրական թաղանթը և նրա ամեն մի ոլորտը։ Աշխարհագրության ժամանակակից հետազոտության օբյեկտը միասնական երկրոլորտն է։

Աշխարհագրական հետազոտություններով զբաղվում են ֆիզիկական և տնտեսական աշխարհագրությունները։ Տնտեսական աշխարհագրության զարգացմամբ աշխարհագրությունը դադարեց միասնական գիտություն լինելուց և դարձավ բաղադրյալ գիտություն։ Աշխարհագրության մի ենթաճյուղը՝ բնական (ֆիզիկական) աշխարհագրությունը, մտնում է բնական գիտությունների, իսկ մյուս մասը՝ հասարակական աշխարհագրությունը, հասարակական գիտությունների մեջ։ Այսպիսով, աշխարհագրությունը միակն է, որ միաժամանակ և՛ բնական, և՛ հասարակական գիտություն է։ XVIII դարից սկսած հասարակական աշխարհագրությունն անվանվում է տնտեսական աշխարհագրություն։

-I-

«Հասարակական աշխարհագրություն» դասընթացի նպատակն է սովորողների մոտ ձևավորել ընդհանրացված պատկերացում արդի հարափոփոխ աշխարհի, նրանում ընթացող տնտեսական, սոցիալական ու քաղաքական երևույթների մասին։ Եթե տնտեսագիտությունն ուսումնասիրում է տնտեսության կազմակերպման ու կառավարման հարցերը, ապա տնտեսական աշխարհագրությունը փորձում է գտնել, թե ինչպես կազմակերպել տնտեսական գործունեությունը, թե որ տարածքներում

տեղաբաշխել տնտեսական օբյեկտները (արդյունաբերական, գյուղատնտեսական), որ ստացվի մեծ օգուտ և հնարավորինս քիչ աղտոտվի շրջակա միջավայրը: Սակայն մենք գիտենք, որ տնտեսական աշխարհագրությունն աստիճանաբար վերածվեց հասարակական աշխարհագրության: Հասարակական աշխարհագրությունը բացահայտում է տարբեր երկրների ու ժողովուրդների աշխարհագրական առանձնահատկություններն ու այդ երկրների համագործակցության ուղիները: Մենք գիտենք, որ երկրագնդի վրա բնության տարրերն ու երևույթները տեղաբաշխվում են անհավասարաչափ: Մարդկությունը գոյություն ունի և զարգանում է բնության հետ՝ մշտապես հարաբերությունների մեջ գտնվելով և ըստ այդմ կազմակերպում է իր կյանքը, հարմարվում է այդ պայմաններին: Տնտեսական աշխարհագրությունը մեզ ծանոթացնում է մարդոլորտին, նրա տարբեր հատկանիշներին՝ տարածքային կառուցվածքին, քաղաքական բաժանմանը, պետությունների դասակարգմանը, աշխարհի բնակչությանը, բնական պայմաններին ու ռեսուրսներին, այն հարցին, թե մարդկությունն ինչքանով է ապահովված բնական ռեսուրսների տարբեր տեսակներով և ինչպես են դրանք օգտագործվում հասարակական կյանքը կազմակերպելու և տնտեսությունը զարգացնելու համար:

Կարևոր է իմանալ, թե ինչպիսի գործոններ են ազդում նրա վրա, ինչպիսին է համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը: Տնտեսական գործունեության գերնպատակը մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումն է:

- II -

Յուրաքանչյուր երկրում դարերի ընթացքում ձևավորվում է մարդկանց գործունեության յուրահատուկ համակարգ, որը պայմանավորված է տվյալ երկրի բնական պայմաններով ու ռեսուրսներով, ինչպես նաև աշխարհագրական դիրքով, աշխատանքային ռեսուրսների մասնագիտական հմտություններով և այլ

գործոններով։ Մարդկային հասարակության ամեն մի միավորունի իր տնտեսությունը՝ լինի դա մեծ, թե փոքր, օրինակ անձնական տնտեսություն, կազմակերպության տնտեսություն, պետության ազգային տնտեսություն ու համաշխարհային տնտեսություն։

Համաշխարհային տնտեսությունը, միավորելով ազգային տնտեսությունները, հանդես է գալիս որպես ամբողջական երկրագունդն ընդգրկող մի գերհամակարգ, ուստի և մեծապես ազդում է ազգային տնտեսությունների վրա։ Համաշխարհային տնտեսությունը միաժամանակ ենթակա է ազգային տնտեսությունների հակադարձ ազդեցությունը։ Աշխարհի հզոր տնտեսություն ունեցող երկրները մեծ ազդեցություն են թողնում համաշխարհային ու նաև բազմաթիվ ազգային տնտեսությունների վրա։

- III -

Համաշխարհային տնտեսության ձևավորումը նոր թափ է հաղորդում աշխատանքի աշխարհագրական բաժանմանը։ Այս բաժանումը ոչ միայն գնալով հարստանում է իր բովանդակությամբ, այլև ընդլայնվում է, ընդգրկելով աշխարհի համարյաբոլոր երկրների տնտեսություններն իրենց տարբեր մակարդակներով։

Աշխատանքի միջազգային բաժանման առանձնահատկությունն այն է, որ չնայած համաշխարհային տնտեսությունը մեկ միասնական համակարգ է, կառավարվում է ոչ թե մեկ կենտրոնից, ոչ թե մեկ պետության օրենքներով, այլ միջպետական պայմանագրերով և միջազգային օրենքներով։ Ժամանակի ընթացքում ազգային տնտեսությունները կրում են և՛ քանակական, և՛ որակական փոփոխություններ։ Քանակական փոփոխությունը երկրի արտադրության և ծառայությունների ծավալի մեծացումը կամ փոքրացումն է, իսկ որակական փոփոխությունը տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունն է։ Այս երկուսն էլ փոխադարձաբար և՛ ազդում են, և՛ իրենց վրա զգում են համաշխարհային տնտեսության փոփոխությունները, որն էլ իր ազդեցությունն է թողնում աշխատանքի

աշխարհագրական բաժանման մեջ ունեցած ազգային տնտեսությունների մասնաբաժնի վրա։

Փոփոխությունների գործընթացը տարբեր երկրներում ընթանում է տարբեր արագությամբ, և այդ պատճառով էլ աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունները հայտնվում են տնտեսական զարգացման զանազան փուլերում, որն էլ կանխորոշում է նրանց մասնակցության բաժինն ու ուղղությունը աշխատանքի միջազգային բաժանման մեջ։

- IV -

Աշխատանքի բաժանումը հին է, ինչպես մարդկությունը։ Ընտանիքի, հասարակության, ձեռնարկության յուրաքանչյուր անդամ զբաղվում է որոշակի աշխատանքով։

Եթե ապրանքների արտադրությունն ու բազմազան ծառայությունների մատուցումը պարզունակ մակարդակով աշխատանք է, այդ աշխատանքը տարածականորեն (աշխարհագրականորեն) բաժանված է աշխարհի բոլոր երկրների մասերի և երկրների միջև։ Աշխատանքի այսպիսի տարածական կազմակերպումը կոչվում է աշխատանքի աշխարհագրական բաժանում։ ԱՄԲ (Աշխատանքի միջազգային բաժանում) առանձին երկրների մասնագիտացումն է որոշակի ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման բնագավառում և համաշխարհային շուկայում դրանց արդյունքի փոխանակման մեջ։

Կարևոր է.

1. <u>ԱՄԲ-ն դիտել որպես տարբեր երկրների մասնագիտացում որոշակի ապրանքների արտադրության ոլորտում</u>, որոնց պատրաստման համար տվյալ երկրում առկա են արտադրության էժան գործոններ և նպատակահարման պայմաններ, համեմատ այլ երկրների նման

մասնագիտացման դեպքում երկրների պահանջմունքները բավարարում են սեփական արտադրությամբ, ինչպես նաև միջազգային առևտրի միջոցով։

2. ԱՄԲ-ն համաշխարհային տնտեսության կազմակերպման ձև է, որի դեպքում տարբեր երկրների ձեռնարկությունները մասնագիտանում են որոշակի ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման մեջ՝ փոխանակելով վերջնական արտադրանքը։

ԱՄԲ զարգացման նախադրյալները. դա աշխարհի երկրների միջև տնտեսական ռեսուրսների տարբերություններն են։ ԱՄԲ հիմքում ընկած է աշխարհի երկրների առևտրային փոխանակությունն ապրանքներով, ծառայություններով և կապիտալով։ Երկրների կողմից ԱՄԲ կատարելու հիմնական պատճառը հասարակական պահանջմունքների աճի և այդ պահանջմունքները բավարարելու համար առկա սահմանափակ ռեսուրսների հասկացությունն է։ ԱՄԲ մեջ ունեցած մասնակցության օգուտներն են.

- Թույլ է տալիս կենտրոնացնել սեփական ջանքերը այն ապրանքների արտադրության մեջ, որոնց համար առկա են լավագույն պայմանները,
- Թույլ է տալիս ընդլայնել այդ ապրանքների արտադրությունն այնպիսի մասշտաբների, որ կարելի լինի բավարարել ոչ միայն սեփական բնակչության, այլև համագործակցող երկրների բնակչության պահանջմունքները.
- Թույլ է տալիս հրաժարվել այն ապրանքների արտադրությունից, որոնց համար երկիրը չունի արտադրության լավ պայմաններ և կարող է ապահովել դրանց օգտագործումը՝ ի հաշիվ ներմուծման։

- V -

ԱՄԲ ստեղծման և զարգացման գործոնները.

1. Երկրների բնաշխարհագրական տարբերությունները
2. Գիտատեխնիկական առաջընթացը
3. Երկրների զարգացվածության տնտեսական և գիտատեխնիկական մակարդակների տարբերությունները
4. Երկրի արտաքին կապերի և կենցաղավարման ձևերն ու բնույթը
5. Վերազգային կորպորացիաների տնտեսական էքստանսիան
6. Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների զարգացումը։

<u>ԱՄԲ ձևերը,</u>

1. Ընդհանուր ԱՄԲ, աշխատանք բաժանում նյութական և ոչ նյութական արտադրության խոշոր ոլորտների միջև (արդյունաբերություն, տրանսպորտ, կապ և այլն)։ ԱՄԲ-ի հետ է կապված երկրների՝ ըստ մասնագիտացման բաժանումը՝ վերամշակող, արդյունահանող և գյուղատնտեսական արտադրություն ունեցող երկրներ։
2. Մասնակի ԱՄԲ, աշխատանքի բաժանում խոշոր ոլորտների ներսում՝ ըստ ճյուղերի և ենթաճյուղերի (ծանր և թեթև արդյունաբերություն, անասնաբուծություն, հողագործություն և այլն)
3. Եզակի ԱՄԲ, աշխատանքի բաժանում մեկ կազմակերպության, ձեռնարկության ներսում։ Աշխարհի երկրները տարբեր ակտիվությամբ, տարբեր ծավալով են մասնակցում աշխատանքի միջազգային բաժանմանը։ Առավել ակտիվորեն մսնակցում են Հյուսիսային Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի երկրները, իսկ առայժմ ամենաակտիվորեն՝ Աֆրիկայի երկրները։

- VI-

Ինչպես յուրաքանչյուր առարկա, աշխարհագրությունը ևս ունի դասավանդման մեթոդիկայի իր առանձնահատկությունները: Ուսուցման մեթոդը կարելի է բնութագրել որպես ուսումնական գործընթացում ուսուցանողի և սովորողի համատեղ աշխատանք:

Ուսուցման մեթոդները բաժանվում են ակտիվ և պասիվ տեսակների՝ պայմանավորված սովորողների ուսումնական գործընթացին մասնակցելու աստիճանով:

- Պասիվ. կիրառման ընթացքում սովորողները միայն նայում կամ լսում են (պատմություն, բացատրություն, էքսկուրսիա, զննում և այլն)
- Ակտիվ. սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպող և խթանող մեթոդները (պրակտիկ մեթոդները գրքով, աշխատանքն ատլասով)

Որևէ թեմայի ուսուցման մեթոդն ընտրելիսպետք է հաշվի առնել.

- Տվյալ թեմայի առանձնահատկությունները
- Ուսուցման նպատակներն ու խնդիրները
- Ուսումնական ժամաքանակը
- Բովանդակությունը
- Ուսումնական նյութի քանակը և բարդությունը
- Սովորողների պատրաստվածության մակարդակը
- Տարիքային առանձնահատկությունները
- Ուսուցման նյութատեխնիկական պայմանները
- Նախորդ դասերին կիրառվող մեթոդները
- Պարապմունքների տեսակը և կառուցվածքը
- Աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների բնույթը

- Սովորողների թվաքանակը
- Ուսուցչի պատրաստվածության մակարդակը։

Յուրաքանչյուր ուսուցիչ մինչև դասարան մտնելը պետք է կոնկրետացնի, թե ո՞րն է իր նպատակը և ի՞նչ պետք է սովորեցնի նա աշակերտին, ի՞նչ միջոց, գործիք պիտի կիրառի ուսումնառության նախանշված արդյունքին հասնելու համար։ Այսօր շատ լավ արդյունք են տալիս ինտերակտիվ մեթոդների կիրառումը (զրույց, երկխոսություն)՝ շեշտը դնելով սովորողի ազատության վրա։ Մեթոդների նպատակը, դա սովորողների մտավոր և զգացական կարողությունների զարգացումն է։ Ես կարծում եմ, որ ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի։ Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարացնել այն իրավիճակին, որ կա տվյալ պահին։ Մեթոդը, դա դասերը վարելու հիմնական գործիքակազմն է։ Դա չի կարող ինքնանպատակ լինել, այսինքն ընտրված մեթոդը դասի ընթացքում մեզ պետք է հասցնի ցանկալի արդյունքի, ծրագրված նպատակին։

- VII -

Դասավանդման ժամանակակից մեթոդներից ներկայացնենք ԽԻԿԱ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում, անդրադարձ) մեթոդը կամ համակարգը։

Ցանկացած մեթոդով դասերը վարելու հիմնական քայլերն են.

- Դասի նպատակի հստակ սահմանումը
- Սովորողի շահագրգռվածության ապահովումը
- Տեղեկատվության մատուցումը
- Աշակերտների տրոհումը խմբերի կամ անհատական աշխատանք
- Ուսուցչի աջակցությամբ աշակերտների աշխատանքի կազմակերպումը
- Աշխատանքների վերջնական արդյունքի ներկայացումը

Մեթոդների ընտրությունը պետք է կատարվի՝ ելնելով ուսուցչի նպատակադրումից: Ըստ նպատակադրման՝ ժամանակակից մեթոդները դասակարգվում են հետևյալ խմբերով.

1. Մեթոդներ, որոնք հարմար են դասի խթանման փուլում՝ մտագրոհ, խմբավորում, պրիզմա և այլն:
2. Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝ տձև աղյուսակ, Վենի դիագրամ, բանավեճ, զրույց և այլն:
3. Համագործակցային ուսուցման մեթոդներ՝ խճանկար, զբոսանք պատկերասրահում, նախագծի մեթոդ և այլն:
4. Մեթոդներ, որոնք հարմար է կիրառել կշռադատման փուլում՝ քառաբաժան, 10 րոպեանոց շարադրության մեթոդ, կարուսելաձև մտագրոհ և այլն:
5. Խմբային գործընթացի մշակումը, որը խմբի անդամների կողմից իրենց խմբի հաջողությունների և արդյունավետ փոխհարաբերությունների:
6. Փոխներգործուն կառուցվածք ունեցող առաջադրանք, երբ մշակվում և տրվում են ուսումնական առաջադրանքներն այնպես, որ դրանք կատարելու համար պահանջվում է թիմային աշխատանք:

- VIII -

Ինչպես եմ ուսուցանում.

Դաս

«Աշխատանքի աշխարհագրական բաժանում» թեման

1. Խթանման փուլ. Դասը սկսվում է ուսուցչի կողմից հետևյալ հարցադրմամբ.

ա. Ի՞նչ է տնտեսությունը և որոնք են նրա գլխավոր ճյուղերը:

բ. Ի՞նչ է ազգային տնտեսությունը։

գ. Ի՞նչ գործոններ են ազդում տնտեսության զարգացման վրա։

դ. Ի՞նչ ենք հասկանում տնտեսության մասնագիտացում ասելով։

Այս փուլում կկիրառեմ մտագրոհ մեթոդը։ Այսուհետև գրատախտակին գրանցվում է այն ամենը, ինչ ասվում է աշակերտների կողմից առանց վերլուծության և լրացուցիչ մեկնաբանման։ Ուղղորդող հարցերով աշակերտներին կներգրավեմ դասապրոցեսին (վերը նշված)- 3 րոպե։

Գործողության ավարտից հետո դասը կարելի է շարունակել հետևյալ կերպ. կուսումնասիրենք աշխարհի արդյունաբերության և գյուղատնտեսության տեղաբաշխման քարտեզները, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ տնտեսության տեղաբաշխումը ժամանակի ընթացքում փոփոխվում է, այն ձևավորվում է երկար ժամանակահատվածում բնական, սոցիալական, քաղաքական և այլ գործոնների ազդեցությամբ։

2. Իմաստի ընկալման փուլ.կկիրառեմ «Գաղափարների քարտեզագրում» ուսուցման մեթոդը գրատախտակին փակցված պաստառի օգնությամբ։ Աշակերտները կփորձեն շրջանագծերում լրացնել աշխարհագրական օբյեկտի տեղաբաշխման գործոնները (5 րոպե)։



3. Կշռադատման փուլ: «10 րոպեանոց շարադրության մեթոդ»

Դասարանի աշակերտներին կբաժանեմ չորս խմբի և կհանձնարարեմ, որ կատարեն խմբային աշխատանք: Յուրաքանչյուր խումբը ներկայացնի փոքրիկ շարադրության ձևով որևէ ապրանքի արտադրությունն ու որևէ ծառայության մատուցումն իրենց խմբի կողմից:

Աշխատանքի այսպիսի կազմակերպումը դիտեն որպես աշխատանքի հասարակական բաժանում:

Եթե ապրանքների արտադրությունն ու բազմազան ծառայությունների մատուցումը պարզունակ մակարդակով դիտենք որպես աշխատանք, ապա կնկատենք, որ այդ աշխատանքը տարածականորեն (աշխարհագրականորեն) բաժանված է աշխարհի բոլոր երկրների միջև (տվյալ պարագայում իրենց 4 խմբի

միջև)։ Աշխատանքի այսպիսի տարածական կազմակերպումը մարդկային հասարակության զարգացման անխուսափելի արդյունքն է և կոչվում է աշխատանքի աշխարհագրական բաժանում։

4. Անրադարձի փուլ (10 րոպե)։

Դիտարկել 4 երկիր (ամեն խմբին նշելով մեկ երկիր) միջազգային բաժանման համակարգում։

Խմբերին տալ աղյուսակներ, որտեղ տրված են արտադրատեսակները և ծառայությունները, որոնցով այդ պետությունները մտնում են համաշխարհային շուկա։

Աղյուսակից օգտվելով և խմբային աշխատանքից հետո (10 րոպե) յուրաքանչյուր խումբ (1 աշակերտ խմբից)պետք է ներկայացնի այն ապրանքների և ծառայությունների ցանկը, որոնցով այդ երկիրը մասնակցում է աշխատանքի միջազգային համակարգին։

1	Ֆրանսիա	I խումբ	Ինքնաթիռներ, մարդատար ավտոմեքենաներ, ատոմային էներգետիկական սարքավորումներ, էլեկտրաէներգիա, հաստոցներ, էլեկտրոնային ապրանքներ, ուրան, ալյումին, դեղորայք, օծանելիք, դիմահարդարման պարագաներ, նորաձևություն, գինի, կոնյակ, պանիր, շաքար, պահածոներ, ցորեն, խոզապուխտ, թռչնամիս, ծովամթերք (մարիկուլտուրա), զբոսաշրջություն։
2	Շվեյցարիա	II խումբ	Նավթ, գազ, ոսկի, կապար, ցինկ, պղինձ, քարածուխ, բամբակ, բուրդ, ցորեն։
3	Թուրքիա	IIIխումբ	Քիմիկատներ, ժամացույցներ, էլեկտրական սարքավորումներ, ճշգրիտ սարքեր, հաստոցներ,

			էլեկտրաէներգիա, պլաստմասա, դեղորայք, պանիր, շոկոլադ, սննդային կոնցենտրատներ, բանկային շառայություններ, զբոսաշրջություն։
4	Վրաստան	IV խումբ	Մանգան, ազոտական պարարտանյութեր, հանքային ջրեր, թեյ, ցիտրուսներ, խաղող, գինի։

Առաջադրանքը կատարելու համար պահանջվեց թիմային աշխատանք։

<u>Ամփոփում</u>. Ուսուցչի օգնությամբ աշակերտները ձևակերպում են, որ աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանումն առանձին երկրների մասնագիտացումն է որոշակի ապրանքների արտադրության և ծառայությունների մասնագիտացման բնագավառում և համաշխարհային շուկայում դրանց արդյունքի փոխանակման մեջ։

- IX –

Ես կարծում եմ, որ պետության և ազգի անվտանգության ապահովման գործում գերակա խնդիր է դառնում ներկայի և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը։ Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա։ Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության։ Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմակերպվում և վերաբաշխվում աշխատատեղերը։ Կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով։

ՀՀ հանրակրթության հիմնախնդիրները ցավոք շատ են և բարեփոխումների կարիք ունեն։

Գրականության ցանկ

- UNIDO (1986) World industry: Statistical review, 1985, Industry and Development, 18 Fig; UNIDO database
- VII դասարանի «Աշխարհագրություն» 2013թ. , Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան
- ՀՀ ԿԳՄՍ նախարարություն (կրթակարգ, չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր և նոր մեթոդներ)
- «Աշխարհագրություն» 7-8
- Ուսուցչի ձեռնարկ 2013թ., Ա. Հովսեփյան, Ռ. Մարգարյան, Գ. Հովհաննիսյան, Մ. Մանասյան
-